## 2. Բովանդակային հաշվետվություն

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

***Միջոցառման նպատակ:*** *«Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների» տրամադրում՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված մինչև 18 տարեկան երեխաների ընտանիքում ապրելու և նրանց սոցիալական ներառումն ապահովելու նպատակով զարգացնել երեխաների ֆիզիկական, մտավոր և հոգեկան կարողություններն ու կյանքի հիմնական հմտությունները, երեխաներին և նրանց ընտանիքներին տրամադրել սոցիալ-վերականգնողական, հոգեբանական և իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն՝ խթանելու երեխաների սոցիալական, կրթական, առողջապահական և ընտանիքում մեծանալու հիմնարար իրավունքների իրացումը, կանխելու նրանց մուտքը հաստատություններ և /կամ նրանց սոցիալական մեկուսացումը, ապահովելու ընտանիքի հետ վերամիավորումը՝ նպաստելով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի ինքնօգնության, ինքնորոշման ու ծագած հիմնախնդիրներն ինքնուրույն լուծելու ունակությունների զարգացմանը:*

Հակիրճ նկարագիր հաշվետու ժամանակահատվածի վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում Գավառի «Փոքրիկ Իշխան» ցերեկային խնամքի սոցիալական կենտրոնում իրականացվել է երեխաների տվյալների հավաքագրում, կարիքի գնահատում և վերագնահատում: Պարբերաբար թարմացվել է երեխաների տվյալների բազան և կենտրոն հաճախման գրաֆիկը հիմնված անհատական սոցիալական ծրագրերի հիման վրա: Օրեկան կենտրոն է հաճախել **25-35** երեխա և մասնակցել են կենտրոնի կողմից իրականացվող ծառայություններին:

Կենտրոնում շահառուներին մատուցվել են հետևյալ ծառայությունները՝

- Սոցիալական
- Հոգեբանական
- Լոգոպեդի
- Սննդի տրամադրում/ ճաշ կենտրոնում
- Խմբավարի
- Անձնական օգնականի

Սոցիալ-հոգեբանական աշխատանք է իրականացվել շահառու երեխաների, ծնողների և նրանց ընտանիքի անդամների հետ:

Շահառու երեխաները կենտրոնում զբաղվում են տարաբնույթ քարտային ժամանցային և ինտելեկտուալ խաղերով, փազլներով, սպորտային սեղանի խաղերով ինչպիսիք են շախմատը, շաշկին, սեղանի թենիսը, բոուլինգը: Խաղերը նպաստում են երեխաների ուշադրության, երևակայության, ինտելեկտուալ և տեղծագործական մտածողության, մտահորիզոնի զարգացմանը ձևավորմանը, նրանք դառնում են ինքնուրույն, կարողանում են միասնական որոշումներ կայացնել, համագործակցել: Այս ամենը նպաստում են նաև երեխաների ճկուն մտքի ձևավորմանը, բարձրացնում է ընդհանուր ինտելեկտը, զարգացնում շահառուների ճկունությունը, շարժումների կոորդինացիան: Խաղերը նպաստում են հայերեն լեզվի ճիշտ կիրառմանը, պահպանմանը, զարգացմանը առօրյա միջավայրում, զարգանում է նրանց լակոնիկ խոսքը:

Երեխաները ցերեկային կենտրոնում գտնվելու ժամանակահատվածում ապահովվում են ամենօրյա տաք սննդով, հիգիենիկ պարագաներով և գրենական պարագաներով: